

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Բարախական, Դիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻՒ 36

Գ. ՇՐՋԱՆ

7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթների սահմանում բաժանորդագիրներ Կ. Պոլսոյ համար Բաժանորդագիրներ և գաղափարներ համար Յիսուսի զր., կանխիկ վճարելի: Արտատպան 12 վրանի կամ 5 ռուբլի: Թղթատարական ծախքը խնայարարական վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն լրեցումուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ընէ ամեն շաբաթ առաջ: Այն բաժանորդները որոնք պակաս քեր ստացած են, պէտք է խնայել խնայելով խնայելով: Ժամանակ անցնելէ վերջ առաջ տեսնելով խնայելով խնայելով խնայելով:

Ձի հրատարակումը ձեռագիրները եւ չեն կարճուի:

Ձեռքի կը ծախուի ՀԱՏԻ 40 ՓԱՐՍԵՒ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزته سي اداره سته

ԽՈՍԱՆԴՐՈՒԹԻՒՆ, «ՄԱՍԻՍ» Ի

Supplément B. Massis

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

ԱՊՐԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ ՇԷՂԱՃՅԻ

ԱՊՐԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ
Յաճախորդաց դիմութեան
համար

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ
Եթէ կ'ուզէք ամէն
տեսակ գոհարեղէններ
ունենալ. դիմեցէք
Կ. Պոլիս, Ոսկերչաց
Շուկայ մեծ փողոց քիւ 13



Հերմայի վաճառատուներ ունին եւրոպական
հաշակով պատրաստուած գոհարեղէններ,
ամենքն ալ առաջնակարգ ըլլալու պայմանաւ,
Հերմայի վաճառատուներ գինեկրն անմիջեղի են,
Հերմայի վաճառատուներ ունին արծաթեղէն
առարկաներ,
Հերմայի վաճառատուներ ունին ժամացույցներ
եւ արծաթեայ գաւազաններ (պաշքոն),

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարկերն քան կանխիկ, մնացեալին հա-
մար շարաթական հարկերն հինգ վճարում.
Կանխիկ գնովին համար 100թ 5 դիզ,
Գործածուած գոհարեղէններ՝ եթէ դիմա-
ռուած չեն, 100թ 10 դիզով եւս կ'առնուին.



Ձեռքի, եռիւկեւ ձեռքի, ուռի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կորի
մեքենայի մնայ, լայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ դէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է,
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐԻ

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն
աւելի կ'առարկեալագործուածը, հաստատունը եւ
դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի
մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին միտիայն Սինկեր Ընկերութեան վաճառա-
տանց մէջ՝

ԲԵՐՍ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց:

- | | | |
|--------|---|--|
| ԿԱԼԱԹԱ | { | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց |
| ՊՈԼԻՍ | { | 1. Սուլթան Համալ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեր.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՇԱՐԼՈՒԿԱՆ
ՄԱՍՆԱԿՎԱՐՈՒՄՆԵՐ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 7 ՕԳՈՍՏՈՍ 1902 —

ԹԻԻ 36

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բխօլժ վիրխով . ՏՈՒԹ . Ե . ՄԱՍԻՆ : — Փոխարինությունը (նորավեպ) ՅՈՎԱ. ՍԵՐԵՍԱՆ : —
Գաղափար . Այցելություն մը առքի . ՏՈՒԹ . Յ . ՍՏԵՓԱՆԵՍԱՆ : — Սիկառը (Բանաստեղծություն)
Յ . Տ . ՅԱԿՈԲՍԱՆ : — Երեք տարի Արժանիքի մէջ (Թերթոն) : — Գուշակեր :

ՌԻԻՏՈԼՖ ՎԻՐԽՈՎ

ՎԵՍՏԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ . — ԲԱՍԹԵՌՈՒ ՆԻ ՎԻՐԽՈՎ . — ԱԴԱՄԵԱՆ ՆԻ ՔՕՈՒ ԱՌԻՇԸ . — ՕՍՄ . ԲՈՇԿԱ-
ՎԱՆ ՊԱՏՈՒԲԱԿՈՒԹԻՒՆԻ Ի ՊԵՐԼԻՆ . — ԳՈՐԾԵԱԿԱՆ ԶՆԱՌԹԻՒՆՆԵՐ ՊԵՐԿՄԱՆ ՎԻՐԱՆՈՒԹԻՆ ՄԱՀԻՆ
ՄԷՋ . — ՏՆՍԱԿՈՒԹԻՒՆ ՄԷ ՎԻՐԽՈՎԻ ՀՆՏ . — ՀԻՄԱՑ ԻՆՉԻՆ՝ ԿԸ ԾԱՌԱՅԷ ՔՕՈՒ ԳԻՒՏԸ :

Հետազոտողը (*) հաղորդեց մեզ հռչակաւոր
վիրիկ եւ մարդաբան Ռիւտովի վիրխովի
մաշ սեպտ 5ին Պերլինի մէջ, 81 տարեկան
հասակին, Յանձին վիրխովի աշխարհ կը
կրկնէ ներկայ ժամանակիս ամէնէն մեծ
վնասներէն մէկը, անդր-Հոննստեան Բա-
վար, վիրխով է որ անմահն Բասթէօրի
մտ վնասէս տիրապետած է այն արտակարգ
բաւժանութեան զոր կատարած են բժշկա-
կան գիտութիւնները առանձիններովը գարուն
կրկնող կէսին մէջ, վիրխով ծնած է 1821
հոկտ. 13ին, քանակեւ տարեկան հասակին
մէջ իր բժշկական թէզը պաշտպանած է եւ
1846ին սկսեալ իր գիտական երկերը գիտնոց
աշխարհին մէջ հեղինակութիւն ունեցած են,
1849ին վերացաւրի մէջ ախտաբանական
անդամազննութեան (anatomo-pathologie)
բաժնէսէօր անուանուած էր եւ 1865էն ի վեր
պէրլինի ախտաբանական հաստատութեան
(Institut pathologique) անօրէնի պաշտօնը
էր վարէր աշխարհառշակ հեղինակութեամբ,
1880էն 1893 Գերմանիոյ Սորբոնդարանին ան-
գլաւիցած է եւ յառաջգիտական կուսակցու-
թեան յարած :

(*) Ծ. Խ. — Այս յօդուածը գրուած էր վիրխովի մահէն
քիչ մը օր ետքն իսկ, բայց ուշ հասած ըլլալով խմբա-
դրմանս, չկրցինք հրատարակել նախորդ թիւով :

Բասթէօր եւ վիրխով, մարդկութեան այս
երկու մեծ բարերարները, թէեւ իրարմէ ան-
ջատ ամէնէն աւելի օգտակար եղած են
տառապող մարդկութեան՝ իրենց կարեւոր
աշխատութիւններովը զարգացնելով այն գի-
տութիւնները որոնք մարդկային կազմութեան
ընթացիւնը եւ կենաց զաղտնիքը կ'ուսում-
նասիրեն, Բասթէօր խմորմանց բնութիւնը
սորվելու ձեռնարկեց եւ անփութելի ապացոյց-
ներով հաստատեց թէ ամէն խմորում յառաջ
կուգայ մանրաճճիւններու, միջրոպներու ներ-
գործութեամբ, եւ այս ուղղութեամբ կամաց
կամաց իրազեկ եղաւ թէ բոլոր վարակիչ
հիւանդութիւնները՝ իրենց բնութեամբ՝ ուրիշ
բան չեն եթէ ոչ մարդու մարմինը կազմող
բջիջներուն (cellules) մասնաւոր մէկ խմո-
րումը, խմորում մը որ ամէն հիւանդութեանց
մէջ կը տարբերի եւ ամէն անգամ մասնաւոր
միջրոպէ մը ծագում կ'առնէ, Արդ, ակներեւ
է թէ Բասթէօր այսպիսի տեսութիւն մը
պարզելու համար պէտք էր նախապէս գիտ-
նալ թէ հիւանդութեանց ճշմարիտ կայանը
ստուգապէս բջիջն է : Եւ ճիշդ այս պատ-
ճառաւ անո՛ւ Բասթէօրի աշխատութեանց
վրայ լիովին հիմնուած բժշկութեան եւ ա-
ռողջապահութեան անհուն գործը կարելի չը
պիտի ըլլար եթէ վիրխով Բասթէօրի հետ

ապրած չըլլար : Վիրխով է որ միանգամ ընդ միշտ հաստատեց իր Բջիջային ախտաբանութիւն (Pathologie cellulaire) անուն ծանօթ երկովը թէ բջիջը կայանն է ամէն հիւանդութեանց ինչպէս նաեւ կեանքի ամէն արտայայտութեանց : Ինքն է որ հաստատած է թէ մարդկային մարմինը «բջիջներու ընկերային կազմակերպութիւն» մըն է , կատարելապէս հաւաստարկչուած : Ինքն է վերջապէս որ ուսումնասիրած , նկարագրած եւ բացատրած է այն փոփոխութիւնները զորս մեր գործարանաց բջիջները կը կրեն առողջ կամ հիւանդ վիճակի մէջ , եւ Վիրխով ինքը յայտնած է սա կարծիքը , որ Բատթէօրի մեկնակէտը եղած է , թէ ամէն հիւանդութիւն կարգ մը բջիջներու քիչ շատ սաստիկ զրգռութեան մէկ վիճակն է եւ ո՛չ այլ ինչ : Վիրխով չէ գոհացած միայն իր մասնագիտական ճիւղերը կազմող արտաբանական անդամազնութիւնը եւ հիւստածարանութիւնը (histologie) խորապէս ուսումնասիրելով , այլ մշակած է նաեւ հնագիտութիւնը , ընկերաբանութիւնը եւ գանկաբանութիւնը : Այս արտակարգ տնօրէնութիւնը եւ խնդրեցողի աշխատաւորը հիմնած է նաեւ երկու նոր գիտութիւններ . բազդաբանական մարդաբանութիւն (anthropologie comparée) եւ ազգագրութիւն (ethnographie) : Հարկ է ըսել թէ Վիրխով ամէն գիտական կաճառներու պատուակալ անդամ ընտրուած է եւ ամէն գիտական համաժողովներու անդամակցած է : Իր կարծիքները միշտ մեծ կշիռ ունեցած են եւ խորին հետաքրքրութեամբ ունկնդրուած է իրեն :

Ընթերցողները չեն մոռցած անշուշտ իր գիտական գործունէութեան յիսնամեակը որ Պէրլինի մէջ տեղի ունեցաւ շատ փայլուն կերպով եւ ամէն կողմէ համակրանաց ու յարգանքի արտայայտութիւններով տօնուեցաւ :

* *

1890 տարւոյն վերջերն էր որ լուր ելաւ թէ Քօխ , մանրէապէս դիտունը , որ 1882 թուականին հիւժարտին միբրոպը գտած էր , յաջողած էր նաեւ այդ չարաշուք ախտին

դարմանն ալ գտնել՝ իր պատրաստած մէկ տիչը (lymphe) ներարկելով : Հարկ չկայ ինչեցնելու թէ այս կարեւոր լուրը որպիսի խանդավառութեամբ լեցուց ամէնուն սիրտերը : 50,000 հիւանդ եւ 10,000 բժիշկ , ամէն ազգէ , գունդագունդ Պէրլին զիմեցին , առաջինները իրենց ախտին դարման գտնելու եւ վերջինները Քօխի մեթոտը սորվելու եւ գործադրելու համար : Կայսերական Իրաւեփ մասնաւոր բժշկական մարմին մը , Տօթի խորասանձեան էջէնտիի նախագահութեամբ , մեկնած էր արդէն Պէրլին , երբ նոյեմբ. 12ին ճամբայ ելայ :

Երկուշաբթի որ մըն էր եւ Սիրքէճիի կայսրանին մօտ դեղարանի մը մէջ մեկնելու պատրաստուած միջոցիս՝ Աղամեան ներս մտաւ նիհարցած , գունատ եւ հիւժարտի ակներեւ նշաններով : Սրբէն նոյն տարին մօտը Հէյպէի կղզին քանիցս տեսած էի զինքը եւ սոսկալի՝ ախտը իր մոլեղին նախանձէ բռնուած ճիւղ՝ իր ճանկերը միայն էր նախապէս՝ ողբացեալ արուեստագէտին ձայնի (*) գործարանին մէջ , այն գործարանին որ իր մեղմածայն թրթուումներովը , դու եւեւեջներովը , աղեկաւոր եւ հեծեծալին ճիւղերովը՝ այնչա՛փ սիրտեր արոփել տուած , այնչա՛փ յուզումներ պատճառած , արցունքներ իլած եւ բուռն ծափեր յափշտակած էր : Երբ մեկնելու իմացաւ , արուեստագէտը յագեւոր եւ մարած շնչութեամբ ինձմէ եւ Քօխի դարմանին նկատմամբ անզեկութիւններ հարցուց մեծ հետաքրքրութեամբ : Ինչ ըսելիքս չէի գիտեր . մէկ կողմէ զինքը ապահովցնել ջանացի թէ իր հիւանդութիւնը հիւժարտ չէր եւ միւս կողմէ խոստացայ այդ մեթոտին նկատմամբ անզեկութիւններ հարստելի իրեն ընդհուպ : Լաւ եղաւ որ ինքն ալ չը մեկնեցաւ Պէրլին , զի ապահովապէս ուրիշ շատ թնտրաբանութիւններու պէս՝ զէրօյն տառնչելի տատիճան վար այդ խոստաշունչ եղանակին մէջ չը պիտի դիմանար եւ աւելի՛ շուտ կեանքը վրայ պիտի տար :

Պերլին հասնելուս հետեւեալ օրն իսկ (*) Աղամեանի հիւանդութիւնը խոչակի ցնդակախտով (laryngite tuberculeuse) սկսաւ :

Ֆն Պերկման ականաւոր վերաբոյժին վերա-
նառական սրահին մէջ Քօխի զեղով ներար-
թեթեանց ներկայ գտնուեցայ տաշին ան-
թամ, Լիւքիւս (lupus) կոչուած մորթի հիւ-
նախաւային կամ գնդակախաւային (tuberculeux)
հիւանդութեան ենթակայ անձանց վրայ կը
կատարուէին ներարկութիւնները : Վերահա-
տական դարձողութեանց յատուկ այդ սրահը
ամէն կատարելութիւններով օժտուած էր .
յոյժ վերէն կը ստանար , ամփիթատրոնի ձեւ
ունէր եւ ուսանողներ , բազմաթիւ օտար-
ազգի բժիշկներ իրարու վրայ բարձրացող
նախադասութիւններու վրայ խոնուած էին : Մեր
գաղափարաւորութիւնը մասնաւոր տեղ մը
դաւած էր բրօք . Պերկմանի շուրջը , Հոն
էն Տօքթ . Խորասանճեան Էֆէնտի , Ֆէյզի
Փաշա , Նաիմ պէյ (այժմ մեռած) , Ֆօն Տիւ-
րինի (այժմ փաշա) , Խուլզի պէյ (թոքախ-
տախին արեւնահոսութենէ մեռած) , Տօքթ .
Ազրոսեան , Տօքթ . Պապանեան (այժմ փաշա) ,
Տօքթ . Զարգարեան եւ Կ . Պոլսէն եկած յոյն
եւ հրեայ բժիշկներ , Ամենքնու ալ եռանդը
նն էր . դարմանը յուսադրիչ կ'երեւար :
Մէկ կողմէ ամէն օր զանազան հիւանդանոց-
ներ կը յաճախէինք եւ միւս կողմէ միքրո-
գրանութեան մասնաւոր դասերու կը հե-
տեւէինք :

Տօքթ . Պապանեան եւ ես կը փափաքէինք
ապրոյն Վերկիովի ներկայանալ , Յաջողեցանք
մասնաւոր յանձնարարութեամբ որոշեալ օր
մը ներկայանալ իրեն՝ Ախտաբանական Հաս-
տատութեան մէջ իր աշխատութեան սենեա-
լի : Երբ յուշիկ քայլերով ներս մտանք ,
Վերկիով իր գրասեղանին վրայ հակած կ'աշ-
խատէր : Յարգանքի եւ ակնածանաց զիրքի
մէջ կը սպասէինք որ աշխատութիւնը ա-
ւարտէ : Որչա՛փ կը յիշեմ , այդ աշխատու-
թեան սենեակին մէջ ամէնէ աւելի ուշա-
քաթիւննիս գրասեղանի մարդկային գանկերու
աղաղակ եւ ճօխ հաւաքածոյ մը : Շատ չան-
քած , պատկառելի ծերունին մեզի դարձաւ ,
ողնակն եւ խօսակցիլ սկսաւ : Այն տան
70 տարեկանի մօտ էր , միջնահասակ եւ քիչ
մը կորաքամակ , կանոնաւոր գիմագիծերով
դէմքը կ'օր , անխնամ եւ սպիտակ մօրուքով
մը յիշապատուած էր : Մանր տաքականերու

վրայ իր երկարամեայ աշխատութեանց հե-
տեւանօք անշուշտ՝ աչքերը յոգնած էին եւ
կարճատես էր . միշտ ակնոց գործածելու
հարկադրուած էր : Իր մաշեցուցիչ հետազո-
տութեանց պատճառաւ էր արդեօք որ դէմ-
քին մորթը բարակցած , ոսկորներուն փակած ,
գունատ եւ մաշաղաթի մը երեւոյթը առած
էր : Իր հարցումներուն կը պատասխանէինք .
Կ . Պոլիս եկած ըլլալը յայտնեց . յիշեց իր
հնազէս բարեկամը՝ Պ . Շլիման՝ որուն հրա-
ւէրին վրայ գացած այցելած էր Տրովադայի
(Հիսարըզ) աւերակները ուր կարեւոր պե-
ղումներ կատարել տուած էր Պ . Շլիման :
Յայտնեց թէ ինքն ուլ հնագիտութեան ու-
սումնասիրող մըն էր եւ իր յատուկ խնդար-
կունքը ունէր : Յոյց տուաւ մեզ Ատրպա-
տականի գաւառին մէջ չիրիմներէ գտնուած
մետաղեայ գօտիներ որոնց վրայ մանրանկար-
ներ յօրինուած էին մեծ ճարտարութեամբ :
Հարցուց ի վերջոյ թէ ինչ գաղափար կազ-
մած էինք Քօխի մեթոտին վրայ : Պատաս-
խանեցինք թէ մենք կարող չէինք որ եւ է
գաղափար մը ունենալ այս նոր դարմանին
վրայ եւ իրեն պէս հեզինակութեան մը կար-
ծիքին կը ոպասէինք , Յայտնեց թէ ինքն ալ
տակաւին որոշ բան մը չի կրնար ըսել եւ
խնդիրը ուսումնասիրելու վրայ է : Առաջնորդեց
մեզ դիպղնութեան սրահը ուր արդէն օտար-
ազգի բժիշկներ կը ոպասէին եւ իր հրամանին
վրայ գետնայարկէն սեղան մը բարձրացաւ ,
որուն վրայ թոքախտէ մեռած եւ Քօխի
դարմանին եւս ենթարկուած անձերու թոքեր
կը կենային : Քիչ մը ժամանակ այդ թոքերը
կարատելէ եւ ուշադիր զննելէ վերջը նշմա-
րել տուաւ ներկաներուն , թէ թոքախտէ
վարակած եւ խոռոչացած մասերէ հեռու
տեղերու վրայ թոքախտի նոր հատիկներ կը
տեսնուէին եւ կարծիք յայտնեց թէ Քօխի
զեղը թերեւս նոր զարկ մը տուած ըլլայ հի-
ւանդութեան եւ միքրոպները իրենց բոյներէն
վտարուելով թոքին առողջ մասերն ալ վա-
րակած ըլլան : Վերապահութեամբ մը հաս-
կըցուց որ , եթէ հիւանդները արտին դանդաղ
յառաջացմամբ ժամանակ մը եւս պիտի ապ-
րէին , կարելի է որ դարմանը փութացուցած
ըլլայ վախճանը : Վերկիով , ինչպէս յայտնի է ,

իր մանրատույզ քննութիւնները ժամանակ մը շարունակելէ վերջը միայն իր համոզումը հրապարակաւ յայտնեց եւ Քօխի դարմանն ալ վերջ գտաւ :

Եռանդը եւ յոյսերը մեծ էին սակայն եւ ամէն կողմէ Քօխի կը գիմէին ու իր աւելին կը խնդրէին կրկնապատիկ գիներ վճարելով . բայց դեղը սպառած ըլլալով , դրամները ետ կը արուէին , Վերջին անգամ մըն ալ Վիր-խովի ներկայացանք եւ յայտնեցինք հրաժեշտի պահուն թէ անկարելի եղած էր մեզի Քօխի դեղէն ստանալ եւ յոյս ալ չունէինք թանկագին հեղուկը ձեռք ձգելու : Համակրելի ծերունին թեթեւ մը ժպտեցաւ եւ րատոր , եթէ կը հաւանէինք՝ մեզի համար երկու սրուակ պիտի ուզէր Քօխ : Հետեւեալ օրն իսկ մեզ յանձնել առաւ երկու սրուակ Քօխի աւել , մէկը Տոքթ. Պապականի եւ միւսը ինծի համար : Վիրխովի երկուսը անկարելին կարելի ըրած էր , բայց մինչդեռ մենք Կ. Պոլիս դառնալու վրայ էինք , Վիրխով իր խուզարկութիւնները կը շարունակէր եւ օրին մէկն ալ իր աննպաստ եւ անգաւառալի վիճակը արձակեց եւ դարմանի այս եղանակը մէկ կողմ ձգուեցաւ : Այն ժամանակէն ի վեր Քօխ կ'աշխատի իր դեղը կատարելագործելու , բայց մինչեւ այսօր զգալիաբար իր նպատակին չէ հասած : Այժմ Քօխի աւելը կենդանաբուժական արուեստին մէջ կը գործածուի հասկնալու համար թէ կովերը թութախտէ վարակեալ են թէ ոչ : Առողջ եւ կայտառ երեւոյթով կովն մը՝ Քօխի աւելը կը ներարկուի . եթէ կովը տենդ ունենայ՝ ապա հովապէս թոքախտէ վարակուած է . հետեւաբար այդ կովը չի գնուիր , կը մորթեն եւ կամ կաթը չեն գործածեր :

Երբ Կ. Պոլիս դարձայ , համակ մը ուղղելով առ Վիրխով շնորհակալութիւն յայտնեցի կրկին՝ մեզ շնորհած սիրալիր ունեւորութեանը եւ Քօխի աւելը իր շնորհիւ ստացած ըլլալուն համար : Յայտնեցի նոյնպէս թէ Քօխի դարմանը գործադրելու արածուած չէինք հոս , քանի որ առկաին որոշ արդիւնք մը չկար եւ դարմանը մահացու ալ կրնար ըլլալ , Քօխի աւելը սակայն պատճառ եղած էր մեզ՝ մեծանուն Վիրխովը տեսնելու որ անմահ գիտնականներու շարքին մէջ առաջին տեղը կը գրաւէ այժմ :

ՓՈԽԱՐԻՆՈՒԹԻՒՆ

—> <—

(ՆՈՐԱՎԷՊ)

Առտուան ժամը 12ին ատեններն է :

Հակառակ ցուրտին ու ձիւնին որուն խոշոր գնդիկները զանգաղ զանգաղ կ'իջնեն՝ դուրսի ամէն առարկաները ճերմակ օղակնելով անասման ցանցի մը մէջ պարտրելով ընդարձակած աւալ Քաթիէ Բ* ը այն աստուկցուն է : Հանրային հաստատութեան մը նպաստ արուած պարահանդէսի մը կըքնէ : Տարօրինակ զուգադիպութեան մը քմահաճոյքովը , ամէն ինչ որ կայ հասարակութեան մէջ տարիքով , վիճակով , դասակարգով , աստիճանով , գաղափարներով տարբեր , իրարու մօտեցած , խմուած , կուտակուած , իրար գրեթէ գրկած են մեծ սրճարանին մէջ , ամէնքն ալ Ս*. Օ* ի արեւելեան նուագախումբին ջլատիչ ու տիրութեամբ հիւնդագին խաղերուն զլւթութեամբը չզթայուած :

Հաստատ մեծատունը փոքրիկ խանութ պանին , վաճառականը ամսականաւոր պաշտօնէին , զբաղէտը յանձնակատարին , խմբագիրը փաստաբանին հետ կ'արմկցին հոն :

Երիտասարդներուն մէջէն չատերը արեւցած են , այս վայրկեանս պարպուած քանի մը գաւաթ քօնեաքէն կամ շամբանայէն շոտ աւելի՝ այն աւելի կաճ պակաս կարելոր յաջողութիւններով կամ յաւաստալիտ պարագաներով , որ տեղի ունեցած են այդ փշերը պարահանդէսին յաջնադիմի դրուագներուն մէջ : Որը պատահութիւն գտած է երկար ժամանակէ ի վեր սրտին մէջ ճնշուած յայտարարութիւն մը մեղմով սպրդեցնելու սիրուած էակի մը ականջին . որը ձեռքի խորհրդաւոր սեղմումներ ունեցած է թարմութեամբ հոտաւէտ եւ պայծառաշուք պարտհի մը հետ . որը ամբողջ տարուան մը սիրտ հասնումները պատմելու ժամանակ գտած է իր պաշտելիին . որը աննշմարելի կերպով գետ չլթուածներուն կը տանի թաշկինակ մը օրով մոլորութեան վայրկեանի մը , չորցուցած է

գորին եռանդէն քրտնաթոր կուսական մասը ճակատ մը :

Բաւական թուով դիմակաւորներ ալ կ'երկին, երկար վերարկուններու մէջ պարուրած, կամ տակաւին ցուցադրելով օձառ նոնդերձներու զգլխիչ հանգրիճումը, որուն սնունդը ամէնքն ալ մէջ մէկ հրեշտակ կ'երեւին կամ այնպիսի էակներ որոնց համար եւ սրոնցմով միայն աշխարհ գալ կ'արժէ, այնչափ փափուկ, զոզտը, սիրտկաթն անոնք, այնչափ օժտուած շնորհներով որոնց տեսիլը եւ հպումը մարդ էակին հաւատալ կուտան թէ իր գոյութեան նպատակը լի վայելել չէ, այլ ազնուացնել, բարձրացնել վեհացնել իր միտքը եւ հոգին՝ աւելի ալէկ սիրելու, աւելի աղէկ պաշտելու համար, կիները, իրենց ֆալաշիքներուն հետ դէմ ուղիմ նստած, ցած ձայնով կը շաղկիբան, մինչդեռ իրենց խօսակցիներէն ոմանք լատ զուարճանալ կ'երեւին, եւ ուրիշներ անհայտ յօրանջումներ կ'երկնցնեն իրենց շփոթներուն վրայ : Այս վերջիները անոնք են որ բախտախաղի մէջ հակառակութեան մը տեղով հալածանքէն տարօրինակ կերպով հիշած տեսած են քսակներն եւ որ, բաւական միտք յոգնեցնելէ յետոյ լախտին երբեմն անցած անհասկնալի քմայքներուն վրայ, անտակ տեսակ յատակագիծներ կը յօրինեն, մոփալութեամբ եւ ողջախոհութեամբ լեզուն, իրենց ելմտացոյցին մէջ բացուած խառնաբալ կարկատելու համար :

Կարգ մը նրբաճաշակներ ալ կան, որ աւելիկան երգերուն մեղեդիէն խորշանքնին կը ցուցադրին, պարզապէս հասկցնելու համար թէ երոպականացած լսելիքներ ունին, թէ եւ ուրիշներուն չափ իրենք ալ կը զգան. ունին այդ կոնտոցներուն եւ աղեղներուն սիրտմովն զաշնակութենէն : Անձնասիրութեան խնդիր, արեւելեան եղանակ մը ճաշակով, ինչ տափակութիւն . ինչ արձակուած ճաշակ :

Բայց ամէնուն վրայ ալ, ինչպէս ըսինք, կը հօգ տարաստփոր երանութեան մը, անգրաւալային հեշտութեան մը տարափը : Արեւմտեան . քնատութենէ արբեցած, խօլալան չըլապար արշաւներէ արբեցած, տարօ-

րինակ ժամու մը, մինչ դուրսը ամէն բան քնոյ գիրկին մէջ կը հանգչի, հոգ գտնուելուն եւ բացառութիւն մը կազմելուն խելայեղ, երգերուն թռչանքներէն զգլխած : Այս, սիրոյ երգերը, ամէն ժամանակներու, ամէն տեղերու մէջ, զգայուն սիրտերը կը զեղուն արբեցութեան օշարակով . եւ այս ժամուն, հիմա, ամէնքն ալ զգայնիկներ են :

Ամէնքն ալ, առանց իրարմէ ակնածելու, կը ժայթքեցնեն իրենց կուրծքերէն այն երկար «ա՛խ» որ ծանօթ յանկերգի մը ետեւէն կը սլանայ : Եւ երբ նուագախումբին սրտաթունդ երգը, երգեցիկ կնոջ սուր ձայնէ մը ծակուած եւ կարծես անոր ցաւին գերին եղած, կը հառաչէ, «Աչք հաթախըլմ . . .», ամբողջին հառաչանքը ամէն ժամանակէ աւելի կ'երկարի, արտասուաթոր, ընձական, եղբրական, մոլեգին : Եւ բաժակներուն չոխնդը կը քառապատկի :

— «Խե՛րն անիծածս . 38 ոսկի իրարու վրայ կորանցնե՛լ, չունչ չառած» : Այս գանգատը պոռացող զժգոհն անգամ, ծովը նետուած սիրուն մետաղը գրեթէ մոռցած, անգնդատոյզ կ'ըլլայ երազացնող գոյութեան մը կոհակներուն մէջ : Կ'ապրին արդարեւ արտակարգ կեանք մը, դիւթական գաւազանէ մը կարծես ցողած ինկած սպիտակափայլ այդ գիշերուան ճամբուն վրայ : Աւելի երկնքի մէջ են քան աշխարհի : Ամէն բան խնծիլ է . չէ, ամէն բան տրտմութիւն է . չէ, ամէն բան յիմարութիւն է, եւ այդ վայրկեանին հոգ ապրին է միայն իմաստութիւն : Առանց այսպիսի գիշերներու, կեանքը կ'արժէ՞ ապրիլ միթէ . կ'արժէ՞ տառապիլ կեանք ըսուած յոգնութիւնը, եթէ չըլլան այդօրինակ աղամանդ ժամեր որ կ'սրսուած դրախտը կը մոռցնեն, եւ չպատմուած նորաքանչ նորահրաշ գրախտի մը կը փոխարկեն աշխարհը :

Եւ երբ երգը պահ մը կը քնանայ, խօսակցութիւնները, աւելի ընդհանրացած, կ'ուգեւորուին, կը վառին, կը թեւաւորուին : Ամէնէն արձակուանակ միտքը զուարթարար սրութիւն մը, անակնկալ շողիւններ կը ստանայ : Բառախաղերը կը վխտան : Ամէն առարկայ, ամէն անձ, ամէն իր, իրենց ըլլալու կերպը փոխած, սրամիտ ակնարկու-

թեան մը նիւթ կը գառնան : Պարուհիները քոյր ուղեկիցներ կը թուին երջանկութեան ճամբու մը մէջ , որուն եզերքը , վրան , ծաղիկներ կը ծագին , եւ լոյսեր կը ծլին , համբոյրի մը նկրտող բերաններու պէս : Սա լամպարը կանթեղ մը չէ , այլ լուսակերտ բաժակ մը որուն մէջ աստուածներուն նեկատրը կը հրամցեն : Սա կապոյտ չղարչը , որ նուրբ մէջքի մը եւ շնորհալի գլխու մը շուրջը կ'ուռնայ , գարնան երկկոյթի մը երկինքէն փրթած պատառ մըն է , որ արուած եւ ընդունուած երգում մը կը յիշեցնէ , երբ առաջին անգամ մեր սիրելիին ըսինք , քու սիրելիիդ ըսիր , իր սիրելիին ըսաւ թէ կեանքը առանց իրեն գատարկութիւն մըն էր անծայրափակ , յոգնատխուր անապատ մը :

Ամէն զիմակի տակէն հրապոյրի , արբեցութեան ժպիտ մը կ'արտափայլի : Ուսերու վրայ ձգուած ճոխ մագերու հոսանքները առնուչաճոտութեան ալիքներ ունին , եւ անոնց մօտեցողը մեխակէ եւ մանիշակէ ծովու մը ալիքներուն մէջ կը կարծէ լողալ : Ճախաբակեայ ձիւնափայլ բազուկները կը խոտառան թաւակալուող պտակ մը յորինել խոնջ գլուխներու , եթէ յոգնին կեանքի դատարկութենէն , կամ լիութենէն : Հաճելի ըլլալ կ'ուզեն իրարու : Ներքնապէս կը մտածեն թէ այդ գիշերն ալ առաւօտ պիտի ըլլայ , թէ ինչո՞ւ չըլլային իրիկուններ որ դար մը տեւէին որպէս զի ժամանակ ունենար մարդ իրեն ուղածին հաղորդելու այն խորհուրդներուն անբաւութիւնը որ զինքը կը լեցնէ : Եւ յետոյ , բաւերը պէտք չէ՞ր որ թեւեր ունենային , լեզուն ինչո՞ւ բոց մը չէր :

Եւ ակնարկութիւնները , անառակ աղոց պէս , ընդարձակ սրահին մէջ կը վազեն կը վազվառնեն , համբաւները տեղերնուն խախտելով , անուները վիրաւորելով , զիրքերը կործանելով , բայց միշտ առանց ցաւցնելու : Խօլ թափթիփուք մըն է շաղկապատութեանց , կիսաքող յայտնութիւններու , ընդոտուցիչ կամրթներու :

— Տղա՛ք , պոռաց բաւական բարձրաձայն Արամ որ , գրադէտներու եւ փաստաբաններու խումբի մը մէջտեղը նստած , մէկուն կարգ չէր թողուր եւ խօսակցութեան բովան-

դակ ծախքը ինքը կը շալլէր. Դ*. հոգաբարձութեան ատենապետին դէմքը պէնտուղի վրէպէր կոր աչս իրիկուն , զիտեցի՞ք . վերջին շահատակութիւնը , փոխանակ կզողը վար իջեցնելու , աւելի բարձրացուցէ : Այդ մարդը կա՞յ ետ , ի՞նչ toupet . . .

Հազիւ թէ սկսած էր այս վերջին խօսքերը արձակել օդին մէջ , անգաղանապաստու զարհուրելի անփութութեամբ , զգաց որ սեղանին տակէն երկու երեք սոքեր իրեն ներուն վրայ հեծան եւ խօսակիցներէն մէկ երկուքը , ստորին շրթունքներին վերին ակունքներով արւունելու աստիճան սեղմելով , Արամի կռնակի կողմը քիչ մը անդին ցրուցին իրենց աչքերովը : Երիտասարդը , առանց ետին գառնալու , հասկցաւ , ու լռեց :

Ընկերները տեսած էին նախ Դ*. հոգաբարձութեան ատենապետ Պարզեանի եւ յետո՛ւ անոր դէմը նստող Վահանեանի գլուխները որոնք , սիւնի մը ետեւէն դուրս ելլելով , իրենց կողմը նայած էին , Արամի բառերուն վրայ :

* * *

Արամ խիստ պատուաւոր առաջնակարգ վաճառականի մը , Վահանեանի քով գրադէր էր : Հակառակ իր պարկեշտ ու լուրջ սովորութեանց , այն իրիկունը , քանի մը գաւթ չամբանեայի ու վերջէն ալ կլլուած քանի մը բաժակ ուրիշ ըմպելիներու շնորհիւ , անգուցաւ եւ անհանդարտ չաղիպագիտութենէ մը բռնուեր էր , ջերմատանջ հիւանդի բանդադուշանքի պէս : Ու երբ վերջէն հասկցաւ որ Պարզեան , քանի մը քայլ միայն իրմէ հեռու նստած , լսեր էր իր ըրած դառն ակնարկութիւնը , զզջաց ըրածին վրայ , մանաւանդ երբ իմացաւ որ Վահանեան , իր տէրն ալ անոր հետ միասին նստած էր : Մտած տանքնին , լայն սիւնէ մը արդիւրեւ , ոչ ինքը եւ ոչ իր ընկերները չէին տեսած այդ իրիւրակը :

Հրապարակի վրայ պարկեշտութեան եւ ուղղամտութեան համբաւովը չփայլող , բայց ամէնուն , նոյն իսկ ամէնէն ակնաուորներուն կողմէ գէթ առ երեսոս ակնածութեամբ քարգուած անձի մը գէմ շեղակի արձակած թշնամանքի նետը նպատակին զարկած եւ ետ նս-

անկեղծ թաթով իրեն զխուռն դպած էր : Ասանց անհնելու , առանց հայելու , հարուստ երաւած եւ լեզուն խածնելու հարկին մէջ դրած էր : Դարմանելու ճարը չկար :

Գինովութենէն յեղակարծ օթափեցաւ : Իրարու ընդհարող կրկին կառախումբերու խոքերէն մէկուն մէջ քնացողի մը զարթեալով ելաւ այս : Պահ մը զինքը կորսուած թոքեց , անուշով կորսուած , պատելով կորսուած , գիրքով կորսուած :

Հակառակ իրաւունքի կողմը գտնուելուն , երեւակայեց որ իր patronը յաջորդ օրը աստաման կը հեռացնէր զինքը իր գործէն , թէ ամէնուն կողմէ կը թողուէր՝ ազնուաւորքի մը տուած աքացի հարուածին համար , թէ ոչ ոք կը համարձակէր օգնութեան եւ պայտպանութեան ձեռք կարկառել իրեն , երկեղով անհաճոյ ըլլալու միւսին որ , ապաքին չարասիրտ ու դժխտ՝ իրեն ամէն չափը հասցնելու պիտի ջանար : Մտածեց մահաւանդ իր սիրականը , որ իրմէ կը խուսափէր , Վահանեանի եղբոր աղջիկը , որուն նաքը ստանալու մեծամեծ յոյսեր ունէր . ինչի վրա Արամի տէրը կղկաթ կաթոցի սիրով կը սրբէր Ատրինէն , կանուխէն որր մնացած մտաւղ էակ մը , սիրուած ու ողբացուած եղբոր մը միտմօր գաւակը , զոր երջանիկ ընել իրողձար եւ որուն սաստիկ համակրութիւնը կը ճանչնար Արամի նկատմամբ :

Ատրինէ հիմայ Արամի մաքին մէջ կը ներկայանար արտասուալից հրեշտակի մը կերպարներն տակ , անոնցմէ զոր գերեզմաններու քով կը տեսնենք , ձեռնամած , նետաւար թռչունի նման գլխահակ , վայրակնած , վաւարմաք : Կը լսէր անոր գանգատները իր ընթացքին դէմ , Կը տեսնէր զայն որ իր սիրոյ խոստումներուն թեթեւութիւնը իր երեւոյն կը նետէր , ու կ'ըսէր իրեն թէ խաբած էր զինքը , քանի որ այնչափ անհոգութեամբ եւ անխոհմտութեամբ կը քանդէր իր կեանքը իրենին հետ կապելու հաւանականութեան չէք :

Արեւը տաքցաւ . զգաց որ երակներուն մէջ տաք հոսանքի նման բան մը կ'առուաւ : Ականջները բզզելունով լեցնուեցան : Ընթրութեան դատալիքը համարեց զինքը , այն

ընկերութեան որուն մէջ հետզհետէ աւելի զիւրին ու հեշտ մուտք մը սկսած էր ունենալ՝ չնորհիւ իր տիրոջ ազնիւ եւ բարեհամարոյր զգացումներուն եւ պարկեշտ ու պատուաւոր բարեկիրթ երիտասարդութեան համար ունեցած անսահման բարեացակամութեան , եւ որուն հպումը այնչափ դժուարին է սակաւաթիւ ընտրեալներէ դուրս ուրիշներու համար :

Եւ երբ , ժամանակը գալով , զքօսատեւ զինքն զատուեցաւ իր բարեկամներուն հետ , հակառակ անոնց քաջաբերական քանի մը խօսքերուն , խուլ անմտունջ մատտանջութեամբ մը հեռացաւ անոնցմէ , թէպէտ առ երեւոյթս հանդարտութիւն կեղծելով :

Առաւօտ էր : Զիւնը անընդհատ կը շարունակէր անդալ : Գործի օր էր . վաճառատուն երթալ պէտք էր . վաճառատուն . պէ՞տք էր վաճառատուն երթալ : Ի՞նչ երեսով պիտի կլլէր Վահանեանի առջեւ : Ի՞նչ պիտի ըսէր իրեն : Այլեւս պիտի ուզէ՞ր պահել զինքը : Անտարակոյս Պարզեան անոր խօսած էր իր մասին եւ իր ծայրագոյն զայրոյթը թափած էր իր գլխուն , այնպէս որ իր տէրը չպիտի ուզէր անշուշտ պահել զինքը իր պաշտօնին մէջ :

Խեղճ երիտասարդը սովորականին եւ արամաւանականին հակառակ ճամբէ մը կ'երթար , արագ արագ , առանց գիտնալու թէ ուր կ'երթար , չգալով ձիւնին կակուղ խաբաւումը որ երեսը կը մարտկէր :

Բաւական քալեց հոգեկան այս վիճակին մէջ , եւ ահա զարմանքով տեսաւ որ տիրոջը դրանը առջեւ հասած էր :

Բնակարանին մէջ առաւօտեան խորին լռութիւնը կը տիրէր . վարագոյրները , փեղկերը ամրապինդ փակուած էին : Երեւակայեց որ այլեւս արգիլուած էր իրեն ոտքը ներս դնել այն սեմէն , ուրիշ այնչափ անգամ մտեր ելիւր էր բարեհամարոյր տիրոջ մը այս կամ այն մէկ յանձնարարութիւնը , մէկ գործը կատարելու համար , եւ որ դուռն էր տաճարին ուր կը բնակէր իր հոգիին պաշտամունքին առարկան , Ատրինէն : Վար ինկած կը զգար զինքը բարձրութենէ մը ուր այնչափ յուսալից կ'երեւար իրեն կեանքը : Դրախտին դուռներուն

առջեւ՝ առաջին մարդը նմանօրինակ ազդե-
մունքներով առգորուած ըլլալու էր անշուշտ
Ազեխարչ նայուածք մը ուղղեց դէպի այդ
դուռը, որ բարեկամ մը թուեցաւ իրեն, ու
երես կը դարձնէր իրմէ :

Շարունակեց ճամբան : Առանց զգալու,
վաճառատունին սովորական ճամբան ձեռք
առած էր դարձեալ : Անտեղիտալի մղում մը
իւր քայլերը դէպի հոն կը վարէր : Սակայն
որոշեց տուն դառնալ : Մօրը եւ քրոջը մեր-
ձեցումը թերեւս իր սիրտը, որ ընկզմած էր,
պիտի վերականգնէր :

Երբ տուն հասաւ, արդէն իրիկուան մօտ
եղած էր, այնչափ չրջած էր ասդին անդին,
թափառական, վառտակաբեկ, հարիւր անգամ
ձեռք առնելով շուկային ճամբան, հարիւր
անգամ թողլով զայն, տենդոտ, յուզուած,
սիրելիին պատկերը միշտ երեւալով եւ խու-
սափելով աչքերէն :

Քնատ էր : Մայրը եւ քոյրը, յոգնած
տեսնելով զայն, ստիպեցին որ քնանայ : Նախ
մերժեց, յետոյ, նստարանի մը վրայ ընկող-
մանած, քունը տարաւ :

Ուռվայոյդ քուն մը եղաւ իրենը, Հա-
ղարաւոր տեսիլներ անցան երեւակայութեանը
մէջ, արագ արագ, սրընթաց ձիու վրայ աչ-
տանակածի պէս :

Տեսաւ Ատրինէն որ, միշտ արտում, պա-
տուհանէ մը իրեն վրայ կը յառէր իր թխաղեղ
աչքերը, անուշութեամբ խառն յանդիմանու-
թեան կերպով :

Ուրիշ անգամ մը, ընդարձակ անտառի մը
մէջ մօլորած գաւաւ զինքը. բարձրաբերձ ծա-
ռերը, ոտախիտ, չէին թողուր կապոյտը
տեսնել : Աւելի գիշեր էր քան ցերեկ. եւ
սակայն առտու էր երբ անտառը մտած էր :
Կ'երթար, կ'երթար, մէկ ճամբան թողլով
միւսը առնելով, արահետներու, կամաննե-
րու մէջ մօլորած, հաղար անգամ նոյն ճամ-
բէն մտնելով, ելլելով, անշուշտ լռութեան
մէջտեղ, հինաւուրց լայնածաւալ խաւար-
չուտ մեհեանի մը սիւններուն պէս աչքերուն
երեւալով ծառերուն բազմութիւնը, անդի-
մադրելի երկիւղէ մը քաշկռատած այն ահա-
ւոր առանձնութեան մէջ :

Ուրիշ անգամ, հալածական կ'ընթանար

փողոցներու, հրապարակներու մէջէն, բոլո-
տեն, գլխաւաց, երկար չապիկով մը միայն
որ մինչեւ ծունկերէն վար կ'իջնէր, երկնքը
ու երկիրը հարաւային սաստիկ հովէ ալեկոծ
եւ փրփրազէզ ծով մը կ'երեւային, յանկարծ
քարացած ազտազտուկ ջուրերով, սպիտա-
կափայլ լեռնակարկառ չողարձակութիւննե-
րով, սրոնց վրայ նայուածքը կը մօլորէր,
Բուպիկ ոտքերէն կ'ամչնար, տուներէն իրեն
վրայ կը նայէին : Ազջիկներու զարմացած
աչքեր իրեն գարշապարներուն կը հետեւէին,
որ կը կոխկռտէին վրաժառանգաւ կոհակները,
կը զգար որ այդ նայուածքները ոտքերուն
տակ կ'իյնային ու կը վառէին լոյսերու պէս
որոնց վրայ ակամայ կը կոխէր, դողալով :
Կը բազմար որ գետինը բացուէր եւ ինքը
մխրձէր, պարանոցաթաղ :

Երբ առտուն կանուխ արթնցաւ, մայրը
քովէ էր, ակնդէտ իր ճակատին :

Նամակ մը տուաւ իրեն, որ առջի իրի-
կունը ուշ առնել ընտելած էր. չէր ուզած
արթնցնել զինքը :

Նամակը կարգաց : Վահանեանն էր որ
կ'իմացնէր իրեն որ, կարեւոր գործի մը հա-
մար, այն օրը ժամը Յին վաճառատունը իրեն
կը սպասէր :

* * *

Ա*. խանին երկրորդ յարկը, երեք սեն-
եակներու մէջ, որ իրարու հետ անմիջական
հաղորդութիւն ունէին, երիտասարդ գրա-
դիւնէր արդէն իրենց գրասեղանին առջեւ
նստած էին : Սպասաւորը վերջին անգամ մը
մտած էր վաճառականին սենեակը եւ ապա-
հով եղած էր որ ամէն րան յարգարուած,
յղկուած, մաքրուած էր :

Արամ երեք սենեակներէն մէկուն մէջ իր
տեղը բռնած էր, եւ լուռ ու մունջ գրեթէ
սկսած էր : Իր պաշտօնակիցները զարմացած
էին անոր անսովոր մտադրազուլութեանը վրայ :
Ժամանակը կանխած էր. ժամը երկուսը
ու կէսն էր :

Երբ Վահանեան եկաւ, առաջին հար-
ցումը Արամին համար եղաւ : Ըսին թէ հոն
էր : Կանչել տուաւ :

Վահանեան, ինչպէս տեսանք, ուղղա-

միտ ու պարկեշտ անձնաւորութիւն մըն էր .
բոլորէն ու ազնիւ :

Երբ գիշերը, Դ*. հոգաբարձութեան ատենա-
պետը Արամի լատը լսած էր , Վահանեանի
բանգատած էր անոր գրադրին անկիրք ըն-
թացքին համար , եւ զարմանք յայտնած էր
թէ ինչպէս իրեն պէս անձ մը այդպիսի ան-
կարգ խայտառակ մէկը իրեն քովը կը պա-
ւէր . եւ տնուղակի առաջարկած էր անոր
որ հեռացնէ զայն իր պաշտօնէն :

Վահանեան պատասխանած էր որ ար-
գարու կը ցաւէր եղածին համար , բայց թէ
այդ երկտասարդը իրեն այնպիսի ծառայու-
թիւն մը կը մատուցանէր որ չէր կրնար ,
առանց մեծամեծ դժուարութեանց բաղխելու ,
անոր սպասարկութիւնէն զրկուիլ : Ծշմարտու-
թիւնը սա էր սակայն որ Արամին տէրը ,
ամէնուն պէս , ամէնէն աւելի կը դատա-
պարտէր Պարզեանի ընթացքը , զոր նողկալի
էր գտնէր : Այդ անձը , խնամակալ կարգուած
նիւթ անշալիահաս որբերու , ժառանգու-
թեան մը գրեթէ կէսը իւրացուցած էր՝ չնոր-
մալ աներկիւղ եւ յանդուգն խարդաւանանքի
էր եւ հանրային կարծիքին դատապարտու-
թեան չզոյւթեան . երկար տարիներէ ի վեր
սեղանակաւ կեղծ յարգանքի մը առարկայ ,
ապրիքը առած , հանրային դատաւնիքին
հարուածէն անգծելի կը մնար իր ծեր կրիայի
հետոյցած կեղեւը :

Ասոր համար Վահանեան չէր կարող , չէր
ուզի անոր երեսին տալ անոր արարքները .
պատշաճութեան հակառակ էր այս , բայց
լատ գո՛ւ պիտի մնար , եթէ օր մը մէկը ,
կի՞թառու իրաւարար կանգնելով , համար-
անէր անոր դորձը անոր երեսին պռուշու .
եւ այն իրիկունը այդ բանը կատարուած էր ,
թէեւ անգիտակցաբար , իր մտարորոք
գրադրին բերնով : Կը տեսնէր որ այդ դասին
արմանի էր Պարզեան , եւ սրտանց կը չնոր
հաւորէր իր պաշտօնեան՝ տուած խարաղանի
հարուածին համար :

Նախորդ օրը կռահած էր թէ ինչո՞ւ Վա-
հանեան չհերկայացաւ . աղէկ կը ճանչնար
իւր գրադրին նկարագիրը . եւ ասոր համար
համարձակ կանչած էր զայն :

Ուտի , երբ Արամ սենեակը մտաւ , Վա-
հանեան խօսքը ուղղեց անմիջապէս անոր ,

առանց յառաջաբանի , ժպտելով մը .

— Պարոն Արամ , կիրակի գիշեր ըրածդ
գիտցած ըլլաւ որ շատ հաճոյ անցաւ ինձի .
թերեւս պատճառը կրնաս հասկնալ . Գիտեմ
քու սովորաբար ժուժկալ եւ զգաստ բար-
քերդ : Պիտի խնդրեմ միայն որ , երէկ իրիկ-
ունին իման պարագաներու մէջ , քիչ մը
տեղեակ ըլլաւ պարպուած գաւաթներու թիւ-
ւանին : Ամաւկանդ արդէն պիտի աւելցնէի .
այս առիթը յարմար կը տեսնեմ . այս ամիսէն
սկսեալ , չորս ոսկի աւելցած է ամսականդ :
Ատրինէին համար , կը փափաքիմ որ ձեր մի-
ութիւնը տարիէ մը տեղի ունենայ . դուն
երջանիկ կրնաս ընել զինքը : Աւելորդ է ըսել
որ մեր մէջը պէտք է մնան այս կարգա-
դրութիւնները :

Ե. ՍԵՌԵՍԸ

Ս Ե Ր Վ Ս Ո Ւ Ն

Սիկառիս ծուխին շէնքը կիւսական ,
Կապոյս ծիրերու նուրբ դրուագներով ,
Նիւթ-եակներու հոգիին նման
Կը բարձրանայ վեր , Անհունութեան փոխ :

Իր ծոյլ գնացելով յաւերժահասի ,
Տակաւ կը մտնի , կը մեռնի գունաս ,
Եւ իր հեւքերը՝ փախստեայ վարսի
Խայթեր կուտան հոգիիս հիւսանդ :

Այդ բիլ ծուխերը՝ երագի՝ վանդակ՝
Երջանիկ , անփոյթ փոխ կը փախչին ,
Պուս մը գործ մոխիր ձգելով միմակ ,
Յաւոս պսուղը՝ առջի՝ կրակին :

Սերեր ալ չըկա՞ն , բոցոս , կրակոս ,
Ալուրներու գի՛րգ քովէն արձարծուն ,
Ռոնց մեռցընող բոյր խնկահոս ,
Տենչեր կը խառնէ անցնող հովերուն :

Սակայն օրեր կ'անցնին շարունակ ,
Պասքանքի , յոյգի , վասակի՝ օրեր ,
Եւ այդ սերերը ծուխի հանգունակ ,
Հեօս նազանքներով կը բարձրանան վեր՝

Այն մոռացոյցի աշխարհին մէջ ուր՝
Սիրք եւ հոգին վրդովանք չունին ,
Զգելով միայն կուրծքիդ ցաւ բափուր ,
Եղկ յիշատակը սերիդ վախճանին ,
— Պու՛ս մը մոխիրը՝ այլած սիկառին . . . :

ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲՍԸ

ԳԱՂԱՏԻԱ

(ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻՒ)

Հարկ չեմ տեսներ ծամծամել ճամբու Նոթերու համար անխուսափելի դարձած նախադասութիւններ . կրկնել , օրինակի համար , թէ հրեզէն դունզը հրաշափառօրէն կը փայլէր երբ իզմիտէ չոգեկառք նստայ . թէ՛ կայարանին զանգակը երեք անգամ զարնելէ ու վայրաշարժին սուլիչը ճչելէ վերջ կը լսուի նուրբ իզմիտէ ու բարեկամներէ , որոնք ծովին անդիի կողմը կը գտնուէին . թէ՛ վերջին անգամ սուլիչը նորէն ճուաց եւ ահա՛ Գաղատիա կամ էնկիւրիւ : Ասոնք ամենքը ու հաւանաբար ասոնցմէ շատ տեղին կրնաք երեւակայել դուք , որ միշտ առիթ ունեցած էք կարգալ ճամբու Նոթեր :

Իմ նպատակս է գրի առնել քսանօրեայ բնակութեանս միջոցին Գաղատիայի մասին կրած տպուորութիւններս , որոնց մէջ կարգ կանոն փնտռել անհաշտ պիտի ըլլայ անշուշտ արձակուրդի գաղափարին :

Հետեւէն՝ շատ սիրուն ու հրապուրիչ է Գաղատիան . ժայռի մը կողին վրայ փռուած քաղաք մը . շէնքերն աստիճանաւորուած զիրք մը ունին : Գիշեր ատեն մանաւանդ , երբ քաղքի ու շրջակայի անհամար շէնքերէն լոյսեր կը պլպլան՝ ընդարձակածաւալ քաղաքի մը տպուորութիւնը անխուսափելի է : Բուն քաղաքը կառուցուած է ամրակուռ ժայռի մը կուշար : Փողոցները առհասարակ այնքան նեղ են որ քով քովի երեք-չորս հոգի մէկէն չեն կրնար քալել : Գլխաւոր շուկան ցածուկ շէնքերով եղբորուած փողոց մըն է , միւսներուն նայելով բաւական լայնեկեղ , Նշանաւոր է նաեւ վրան գոց չուկան , որ Պոլսինին մէկ մանրանկարը կրնայ համարուիլ :

Քաղքին նոր շինուած մասերն ունին բաւական ընդարձակ փողոցներ եւ աղուօր շէնքեր . իսկ հին թաղերուն մէջ աննկարագրելի կերպով անկանոն ու նեղ փողոցներու միայն կը հանդիպուի : Իմ տեսած բոլոր քաղաքներ

բոլոր ու գեղերու մէջ փողոցներու նեղութեան եւ տուններու խառութեան մասին մրցանակը Գաղատիայի կու տամ : Անցայ անակ փողոցներէ , ուր արեգակը երբեք չի կրնար թափանցել . տեսայ դէմ գէմի բազմաթիւ տուներ , որոնք չէ թէ լո՛կ զիրար կը համարուէին՝ հապա նոյն իսկ զիրար կը գրկէին , կ'ողջագուրէին :

Գաղատիայի վրայ խօսիլ ու անոր՝ այս եղանակի փոշին չի յիշել անկարելի է : Նեղ փողոցներ , արեւադուրկ սալայտակներ , որոնց վրայ՝ քանի մը մատ բարակ փոշին անպակաս է . մանաւանդ այս ամառ , որուն համար կըսուի թէ սովորականէն աւելի շոգ ու անանձրեւ անցու : Փոշին՝ մանաւանդ քաղքին ծայրերը , դէպ ի այգիներն ու տրտերը տանող ճամբաներուն վրայ՝ աչք կ'օրցունելու եւ շունչը բռնելու հափ առատ է ու թանձր : Սեւ կամ մութ գոյն հանգրձնեով ատ կողմերէն անցնող մէկը ճերմակ կամ մոխրագոյն գուրս կ'ելլէ անդիի կողմէն : Այս ալ սակայն լո՛կ վարժութեան խնդիր մըն է , անդայիները վարժուեր են ասոր , ու այցեն լուին վրայ այնքան աննպաստ տպուորութիւն մը ձգող այս փոշին կարծես այնքան անհաճոյ չի թուիր իրենց եւ անդադր կ'անցնին կը զառնան փոշելից տեղերէ :

Քաղքին ճիշդ մօտերը տեսայ բանջարեան ցիւցներ , ուր աճող կանանչկոկէններուն աւելի պիտի յարմարէր . ճերմակեղէններ ամուռը , քանզի դժուար էր գտնել հոն՝ կանանչի մօտեցող գոյն մը : Բայր տունկերը , ցածուկ բանջարեղէններէն մինչեւ բարձրածիզ ծառեր՝ գունատ , հողի գոյն տերեւներ ունին ըմբոստ , փոշին , Գաղատիայի այդ ամենուրեք տարրը՝ ամենուն վրայ ցանուած է անխորի :

Շէնքերու վրայ խօսուած ատենը անկարելի է չյիշել Գաղատիայի նշանաւոր պարիսպները , իմ գործս չէ՛ պատմական հետաքրքրութեան՝ մէջ մտնել ու ներկայացնել ձեզի զօտութեան՝ մէջ մտնել ու ներկայացնել ձեզի այս քաղքին հին պատմութիւնը : Ոչ թէ իբրեւ հնագէտ՝ այլ իբրեւ պարզ այցելու մը սակայն հիացումով դիտեցի այդ հսկայ ու հնամի պարիսպները , որոնցմէ շատեր հաւանաբար հազարաւոր տարիներու հնութիւն մը ըլլալով հանդերձ՝ պահած են իրենց նախնա-

կան վիճակը : Հոռմէկան եւ յունական ար-
ձանագրութիւններ կրող քարեր շատ կան
հոս հոն նետուած կամ պարիսպին մէջ զե-
րոնեալ :

Առևտուրի շատ յարմար քաղաք մը կրնայ
լայլ Գաղատիա , կամ վաճառականութեան
կարեւոր կեդրոն մը . իսկ պատկուռ զքօսնու-
ած մը չէ՛ երբեք : Բռնի քաղաքէն դուրս ,
մինչեւ երկու ժամ հեռուները այգիներ ունին
քաղաքացիք , ուր կը քաշուին ամառները ,
կնիք-չորս ամիս : Եւ իրաւ կ'արժէ այցելել
այլ այգիները , որոնցմէ ոմանց նման չքեզ
ուրազմածախ չէնքեր բռն իսկ քաղաքին
մէջ չի կան : Գրեթէ ամէն մարդ այգի կ'երթայ
ամառը , աղքատը՝ իր համեստուկ տնակն ու
թիւ մը այգին ունի . ունեւորը՝ իր փառաւոր
նախնորդն բնակարանը եւ ընդարձակ մրգաս-
տանը : Պէտք մը , անհրաժեշտ պէտք մը կը
անպոխ այգին . եւ շատ իրաւամբ , քանզի
քաղաքին այն անկանոն փողոցներուն ու
խիտ առնելուն մէջ մարդ կը մարի կը տապ-
ալի ամառուան տաքերուն : Հիւրընկալ բա-
րեկամի շնորհիւ՝ աճիթ ունեցայ պատիլ ու
տեսնել այդ այգիներուն է՛ն նշանաւորները ,
որոնք իրա՛ւ տեսնելու արժանի բաներ են :
Այցելեցինք , զոր օրինակ , այգի մը որուն
համար 10,000 ոսկիի տառապելական գումարը
խառնուեր է : Երբ սակայն տեսնէք այդ «այ-
գին» , իր հիանալի մրգաստանովը , զանազան
էնտով աղբիւրներովը ու հալիւղներովը , հո-
րակապ չէնքերովն ու . . . ինքնաշարժ կառ-
քովը , այն ատեն պիտի համոզուիք թէ ան-
հաւատալի գումար մը չէ այդ : Դիտելի է
նաեւ թէ պարարտ , բերրի չեն այս կողմի
տեղերը : Ժայռի վրայ տունկ անկեր են մար-
դիկը , չոր ու ցամաք երկրէն ջուր հաներ են .
ուտի եւ տարապայման ծախքերու ենթար-
կուած են այդ «այգի»ներուն համար : Եւ կը
կարծեմ թէ իրական վայելքէ աւելի՛ զիրար
գերազանցելու տենջէն մղուած՝ սմանք ծախ-
ած են ահագին գումարներ այս այգիներ-
ուն համար :

Գաղատիացիներուն զքօսանքի գլխաւոր
տեղն է գետափը : Բայց սխալ չի հասկցուե-
լա համար ըսեմ անմիջապէս թէ ասոնց գետ
կողմը Միսիսիսի կամ Ամազոնի նման ջու-

րեր չեն . սա՛նկ քչիկ մը ջուր , որ հովիտի
մը մէջէ կը վազէ . չեմ ուզեր ջուրին քա-
նակութեան մասին կարուկ բան մը ըսել ,
հաւանաբար սակայն տառը մատուցայէն ա-
ւելի ըլլալու էր : Քաղաքին քովին է այս
«գետ»ը եւ ժողովուրդը հոն կը դիմէ կիրակի
եւ տօն օրեր , շատ անգամ ամբողջ օրը հոն
անցընելու համար : Կանանչ , գեղեցիկ ծա-
ռեր ա՛յնքան հազուադիւտ արտագրութիւն-
ներ են այս կողմերուն համար՝ որ իրաւամբ
կը փնտռուի գետին երկու եզերքներուն
վրայ բարձրացող խամրած կանանչութիւնը :
Ծովեզերեայ քաղաքներու քարափին կամ
ծովափին կարեւորութիւնը ունի այս գետա-
փը՝ տեղացիներուն համար :

Ամէն բանէ աւելի ընթերցողներս հետա-
քըքրուին թերեւս այս տեղի հայ համայնքին
վրայ մասնաւորաբար տեղեկութիւններ ունե-
նալու : Լա՛ւ , ամառ ըլլալով՝ դպրոցները գոց
էին . չի կրցի ուրեմն դպրոցները տեսնել եւ
անձամբ կարծիք մը կազմել անոնց մասին :
Իմացայ միայն թէ Լուսաւորչական Հայերը
ունին բաւական գոհացուցիչ մանկապարտէզ
մը եւ փոքրիկ ծաղկոց մը : Առաջինին վրայ
գովեստով խօսողներ եղան , բայց վերջինին
նկատմամբ աղէկ խօսք մը զրուցողի չի հան-
դիպեցայ :

Քաղքիս Հայերը շատ պատուաւոր դիրք
մը ունին արդարեւ . Լուսաւորչական Հայերը
մանաւանդ , թիւով փոքր թէեւ՝ բայց նշա-
նակելի կարեւորութիւն մը ունին հրապա-
րակին վրայ : Ուրախութեամբ տեսայ թէ բո-
լոր փառաւորաններն ալ հայ էին եւ ամէնքն
ալ կարող ու կարեւոր տնձեր : Նմանապէս
զանազան վարչութիւններու ինչպէս նաեւ
կառավարական գործերու մէջ ալ կան դիրք
բռնող Հայեր : Հայերը լաւ ներկայացուած
են նաեւ վտճառականական ճիւղին մէջ :

Յայտնի է անշուշտ թէ Գաղատիայի Հայ-
երուն մեծամասնութիւնը կը կազմեն Կաթո-
լիկները : Ազգին երեք բաժանումները ստպէս
կը ներկայացուին Գաղատիայի մէջ . Կաթո-
լիկ Հայեր՝ 7,000 . Լուս. Հայեր՝ 1,500 .
Բողոք. Հայեր՝ 150 հոգի : 60,000 ըլլալով
Գաղատիայի բազմամարդութիւնը՝ ատոր իբր
վեցերորդը ուրեմն կը բաղկանայ Հայերէ :

Հակառակ սակայն թուական այս համեմատութեան՝ ուրախալի է վկայել թէ վաճառականութեան մէջ խիստ կարեւոր դերք մը բռնած են Հայերը՝ Լուսաւորչական թէ Հոսմէական :

Ս. Աստուածածնի տօնին հոս դանուելով՝ առիթ ունեցայ տեսնել հայ ժողովուրդը՝ եկեղեցիին մէջ : Առէն մարդ գիտէ արդէն թէ Ս. Աստուածածին անունով վանք մը ունինք հոս . տաի ա՛ն վանքն է որուն համար բաւական գլուխ ցաւցոյցին ժամանակին մեր բոլոր թերթերն անխափր : 800 տակի խնդր մը կար , ոսկից ըսուեցաւ թէ մաս մը կուտուած էր այն տանի վարդապետը Ըսողներ կան հիմա թէ խեղճ մարդը փարա մը իսկ չէ կերած . այլ չէ կրցած նախատեսութեամբ մատակարարել : Որքանոցի համար շինուած չէնքը պարապ կը մնայ . հաւանական է որ քիչ ատենէն կատարելապէս անքնակելի դառնայ , եթէ մասնաւոր խնամքի առարկայ չի դառնայ : Պարապ , բոլորովին պարապ տեղը վաճառելու է այդ ստաղը եւ չէնքն ալ պարապ կը մնայ այսօր վանքին շրջափակին մէջ , իբրեւ վկայ վարչական գործերու մէջ մեր առաջնորդներուն անհնաւատեա ու անհաշիւ յնթացքին :

Երկու խօսք ալ էնկիւրիցիներու ընտանեկան կեանքին նկատմամբ : Հիւր մը գացածին պէս անեցիներուն առաջին գործը կ'ըլլայ ծխախոտ , հրամցնել . եթէ իրական սեւէն են հիւրերը՝ սեխի ու դգումի կուտորը մէջտեղ կ'ելեն : Տգեղ սովորութիւն մը . կը նստին գէմը , չըք չըք կուտ կը կոտրեն : Տգեղ սովորութիւն մը դարձեալ , սա՛ կ'ենեւորուն ծխելը : Հաւատաւեցին սակայն ինծի թէ չի տեսայ դեռ Գաղատիացիներուն է՛ն ազեղ սովորութիւնը , ձմեռ գիշերներ թուղթ խաղալին . . . :

Գաղատիա ՏՈՒԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
24 Օգոստոս 1902

Մասիսի յաջորդ թիւով պիտի հրատարակենք Մասեկախօսական մը՝ ՅՈՎՀ. ԳԱՋԱՆՃԵԱՆԷ , Նոյնպէս Ս. ԱՆԳԵՂԵԱՍ զըրկած է մեզ ուսումնասիրութիւն մը՝ Այսքնեան եւ հայ քանասիրութիւնը զոր պիտի հրատարակենք յաջորդ թիւով :

ՆՇԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Հաճոյքով կ'արձանագրենք , մեր կարգին , երկու ծանօթ ու պատուաւոր ընտանիքներու միջեւ հաստատուած խնամութիւն մը՝ նշանախօսութեամբ մը զոր ծանուցին ո՛չ միայն ազգ. օրաթերթերը , այլեւ Իգգաւ ու Մոնիթօր , խնդակցական արտայայտութիւններով :

Անցեալ կիրակի օր , Բրինքիւրօ , Քընաճեանց բնակարանին մէջ , ընտանեկան գեղեցիկ հանդէսով մը տեղի ունեցաւ Արեւելի Տէր եւ Տնօրէն եւ Կ. Պոլսոյ Առեւտրական Սեկեակի Ա. քարաւղար Զարեհ էֆ. Եռասեփեանի նշանախօսութիւնը Օր. Սրբուհի Քընաճեանի հետ , զուսար հանգուցեալ Թարութիւն էֆ. Քընաճեանի , Երկու կողմի ազգականներէն ներկայ էին Կիւլպէնկեան , Նորատուկեան , Մանուկեան , Մարկոսեան , Երկանեան ընտանիքներու ներկայացուցիչներ եւ ուրիշ ժողաւոր ազգականներ ու բարեկամներ :

Զարեհ էֆ. Եռասեփեան ծանօթ եւ յարգելի անուն մը ունի լրագրական հրապարակի վրայ , թէ՛ իբրեւ Տնօրէն Արեւելի եւ թէ՛ իբրեւ խմբագրապետ Առեւտրական Լրագրի , եւ այդ կրկին հանգամանքներով , ինչպէս նաեւ իր ընկերային ձիրքերով , իր լեզուադասութեամբը եւ ինքնօգնութեամբ յատաճացած երիտասարդի յատկանիշովը արժանաւոր դերք մը կը գրաւէ ու գեղեցիկ համբաւ մը կը վայելէ : Օր. Սրբուհի Քընաճեան , իր բնածին յատկութիւններուն կը միացնէ խնամեալ դաստիարակութեան մը առաւելութիւնները : Երջանաւարտ Մեզարութեան վարժարանին , իր զարգացումը առաջ տարած է բնականութիւն մէջ , եւ այսօր՝ հայ գեղեցիկ սեւին չնորհալի ու պատուաբեր անդամակցութիւն մէկն է իրաւամբ :

Մասիսի խմբագրութիւնը կը փութայ , այս քարեղէպ առթիւ , իր ջերմ չորհաւորութիւններն ու խնդակցութիւնները ուղղել իր յարգելի պաշտօնակցին՝ Զարեհ էֆ. Եռասեփեանի , եւ Օր. Սրբուհի Քընաճեանի :

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

ՌՕՄԷՆ ՏՕՐԻՆԵԱՔԻ ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Ժ. ԳԼՈՒՆ

Գալտ մը որ կ'այրի. — Տօմենկօ և Օնօրիօ երեւան չկան. — Քառմեն քաղաքը. — Սարսափելի յայտնութիւն մը. — « Էլ լօքօ տէլ աժօռ. » . — Սիրոյ խենթին կրկին. — Ճախիճին մէջ. — Ռօմեն տ'Օրինեաք երկու ալք մէջ. — Նուաղում:

Այդպէս վաղցուցի ձիս բաւական երկար տան :

Հրդեհը երթալով կը տարածուէր դաշտին մէջ. չոր խոտերը վայրկենապէս կրակ կ'առնէին եւ հսկայ բոց մը մինչեւ երկինք կը բարձրանար :

Ասիս նեղ անցք մը կար, երկու բլրակներու մէջտեղը. անպատճառ պէտք էր անկէ անցնիլ ինքզինքս աղատելու համար : Զիս կիկնի այն կողմ, եւ զարմանքս որչա՛փ մեծ եղաւ, երբ տեսայ որ Տօմէնկօ եւ Օնօրիօ թիկ կը սպասեն հոն :

— Դո՛ւք հո՞ս, պոռացի զիրենք տեսնելու պէս :

— Այո՛, երկու օրուան մէջ շատ մեծ համայ մը կտրեր էք. գէշ չէ. մենք դիտմամբ հոս սպասեցինք, որովհետեւ վստահ էինք թէ դաշտին հրդեհը անպատճառ ձեզ հոս պիտի առաջնորդէ :

— Իբաւ ալ կրակին պատճառաւ այս կողմը ուղղուեցայ :

Տօմէնկօ յաղթական նայուածք մը թարթեց աչուէն կողմը :

— Բայց դուք ինչպէ՞ս աղատեցաք. Հըն. լիկնիքուն ձեռքէն, հաբցուցի իրենց :

— Շատ պարզ կերպով մը. տեսնելով որ ձեզի պիտի հասնին, դաշտին կրակ տուի, անոնց առջին բարձրացնելով բոցէ պատուար մը զոր ընտ չպիտի կրնային անցնիլ : Միւս կողմէ, վստահ էի թէ բոցերը ձեզ հոս պիտի առաջնորդեն, որովհետեւ հովը գէպի այս կողմ կը բերէր բոցերը, եւ դուք ալ դաշտին մէջը ըլլալով, պիտի ստիպուէիք փախչիլ անոնց առջեւէն :

Ես ալ իմ արկածներս պատմեցի իրենց, ու քիչ մը բան ուտելէ վերջ երեքս ալ քնացանք այդ ծմակին մէջ :

Հետուն՝ դաշտը կ'այրէր միշտ :

Յաջորդ առտուն, առանց ո՛ր եւ է արկածի մը հանդիպելու, Նէկրօ գետին եզերքը հասանք : Գետը որ նաւարկելի է, յօրդած էր այդ միջոցին. ստիպուեցանք լողալով անցնիլ դայն, հասնելու համար Քառմէն քաղաքը՝ զոր որոշած էի այցելել :

. . . Երեք օր վերջ Քառմէն հասանք, 1800 բնակիչով պզտիկ քաղաք մը որ սակայն ինծի շատ ընդարձակ երեւցաւ : Երկար ատեն կար որ կանոնաւոր քաղաք չէի տեսած, եւ այդ կայքը չա՛տ հաճելի տպաւորութիւն մը կ'ընէր վրաս : Քաղաքը Ովկիանոսէն 12 մղոնի չափ միայն հեռաւորութիւն ունենալուն՝ բաւական վաճառաշահ էր, եւ տարւոյն մէջ շատ մը մարդիկ կուգային հոն :

Տասնըհինգ օր մը մնացինք հոն, հանգիստ առնելու համար : Ես մանուաւնդ, վերջապէս կրցայ քիչ շատ շնորհքով հազուստ մը ճարել ինծի. վրայիններս բզիկ բզիկ եղած էին :

Տօմէնկօ առաջարկեց որ վերադարձի համար բոլորովին տարբեր ճամբայ մը ընտրենք մեզի. Նէկրօ գետին ընթացքին հետեւելով մինչեւ Կուարտիա պիտի բարձրանայինք, եւ այնտեղէն ձեռք պիտի առնէինք դաշտերու ճամբան, ինչ որ ուրախութիւն պատճառեց ինծի : Այդպէսով առիթը պիտի ունենայի այցելել Բաթակոնիա, որուն բնակիչներուն նկատմամբ այնքան հետաքրքրական բաներ լսած էի մինչեւ այդ օրը : Տօմէնկօ զիս քիչ շատ լուսաբանեց այդ մասին : Ըսաւ օրինակի համար թէ Բաթակոնները կարծուածին չափ չա՛տ բարձրաճատակ չեն. ընդհակառակը, միջինէն քիչ մը բարձր հասակ մը ունին. ըսաւ տակաւին թէ այդ ցեղը երթալով կ'այլաւորի, կը նուաղի. յետոյ քիչ շատ տեղե-

կութիւն տուաւ անոնց այլ եւ այլ բաժանութիւններուն վրայ, իրմէ սորվեցայ թէ Բաթակոնները երկու գլխաւոր ցեղերու բաժնուած են. Բիւէլչէզները եւ Թէհիւէլչէզները, որոնք միասին հազիւ 2000 հոգիի կը հասնին, եւ շարունակ կ'առուելով կ'առուելով իրար կը ջնջեն:

Ամբողջ ութը օր Նէկրօ գետին եզերքէն չբաժնուեցանք: Որովհետեւ աճապարելու պատճառ մը չունէինք, կամաց կամաց կը յառաջանայինք, առանց ինքզինքնիս յոգնեցնելու: Ճիշդ զբօսաշրջիկներու անհոգութեամբ:

Կուարտայէն անցնելէն վերջ Բօլօ հասանք, ու Տօմէնկօ մասնաւոր զգուշութիւն մը պատուիրեց մեզի:

— Այս կողմերը, ըսաւ, Հնդիկներու շա՛տ վտանգաւոր ցեղ մը կայք հաստատած է, եւ չիտակը խելացութիւն չէ անոնց երեւալը:

Արդարեւ, շատ չանցած, երկու Հնդիկներու հանդիպեցանք, որոնք սակայն մեզ տեսնելուն պէս փախան գացին:

— Անպիտանները վախցան մեզմէ, ըսաւ Տօմէնկօ:

Երկու օր վերջ Քօլարատօ գետը հասանք եւ առանց դժուարութեան զայն անցանք:

Գետը անցնելէն վերջ ա՛յլ աւելի մեծ զգուշութեամբ յառաջանալ սկսանք: Այդ կողմերը լեցուն Հնդիկներ կային, եւ որպէս զի մեզ չտեսնեն, Տօմէնկօ նոյն իսկ կրօակ վառել չէր տար:

Նէկրօ գետէն բաժնուելէն ի վեր, երկիրը միօրինակ բան մըն էր. հազիւ մեր ձախ կողմը քանի մը ծառեր կը տեսնուէին, եւ ան ալ ըլրակներու շարքի մը վրայ: Անկէ անդին, գետինը ծածկուած էր չոր խոտով մը, որ տեղ տեղ գետին երակներէն գոյացած ճահիճներուն շուրջ: Եւելի կեանքոտ կանանչով մը կը վառէր:

... Իրիկուն մը՝ մինչդեռ արեւը մարը կը մանէր, անապատելի յայտնութիւն մը ստրաստի մատնեց զիս:

Չորս զին բաւական մութ էր, բայց առջիս, գետին վրայ, չէկ լոյս մը կը շողար, եւ այդ լոյսին մէջ հսկայ մարդ մը կանգնած, զիս կը զիտէր կարծես:

Ձիս անգամ առնուեցաւ այդ մարդուն տեսքէն ու խրաչեցաւ:

Իսկոյն ընկերներուս դարձայ:

— Ո՞վ է այս մարդը, հարցուցի իրենց: Տօմէնկօ՝ փոխանակ պատասխանելու, հարցուց իր կարգին:

— Ձե՛ս գիտեր թէ ո՞ր կը գտնուինք:

— Ինչպէ՞ս կրնամ գիտնալ:

— Ան առե՛ն, մտիկ րէ՛ք, ըսաւ Հնդիկը խորհրդաւոր կերպով մը: Գիտեմ որ վախցար քիչ մը առաջ, եւ իրաւա՛մբ, որովհետեւ դուն՝ նոյն ինքն մարդկային ցեղին թընամիրն դէմը կը գտնուէիր: Այս տարօրինակ մարդը, սիրային դժբաղդութեան մը վրայ, եկած քաջուած է հոս, ու մինակը կ'ապրի: Կրնայ ըլլալ որ մեծ ոճբագործ մը ըլլայ, բայց նոյն առե՛ն ալ պէտք չէ՝ ուրանալ որ շատ մը զիւցազնական շահատակութիւններ ըրած է այս կողմերը, «Ել լօքօ տէ ամօռ» — Սիրոյ խնթը, — կը կոչեն զինքը, եւ հիւզակն ալ որ գետին կեդրոնը գտնուող կզկեակի մը վրայ հաստատուած է, իր անունը կը կրէ:

Ուղեցի հասկնալ թէ ի՞նչ դժբաղդութեան հետեւանքով մարդը այսպէս առանձնացած էր եւ ինքզինքը հեռու կը պահէր կենդանի էակներէ. Տօմէնկօ սակայն մերժեց աւելի բան մը ըսել:

Իր լուծիւնը լուրորովին մեծցուց հետաքրքրութիւնս:

Կ'ուզէի տեսնել այդ մարդը. անգիտօրէն ի, անզուտով փափաք մը շարունակ կը խռովէր զիս:

Բայց ինչպէ՞ս պիտի կրնայի իր քով երթալ:

Ինչպէ՞ս պիտի յաջողէի գետը անցնի՞լ այդ կղզիին հասնելու համար:

Չորս կողմը ճախճախուտ էր, եւ շատ վախ կար օր կեանքս վրայ տայի:

Ինչ որ ալ ըլլար սակայն, որոշումս արւած էի վերջնականապէս: Ա՛յլ բան մը չէր կրնար զիս ետ կեցնել, մանաւանդ որ քիչ շատ զիւրանցանելի ճամբայ մըն ալ նշմարած էի խոտերուն մէջ:

Ու ճիշդ այդ ճամբէն սկսայ յառաջանալ, երբ երկու ընկերներս ալ խոր քունի մը մէջ թաղուեցան:

Քանի՛ կը յառաջանայի , ա՛յնչափ զգայի
ճամբուն զփութարութիւնը :

Ջուրը մինչեւ ծունկերուն հասած էր , եւ
բաւական կը նեղէր զիս :

Վերջապէս կրցայ որոշակի տեսնել կղզին ,
որուն վրայ , սեւ կոյտի մը պէս ցցուած էր
խնթին ընակարանը : Ներսը լոյս կը վառէր ,
եւ այդ լոյսէն տկար ցոլք մը երկնցած էր
նահիճին վրայ :

Այդ լոյսին կողմը ուղղուեցայ , բայց ,
սարորին՝ կ'ըսէ , քանի՛ կը յառաջանայի ,
վերջին ալ ա՛յնքան կը հեռանար իզմէ :
Սկիզբէն անանկ հաշուած էի թէ հազիւ իզմէ
խառն մէթրի չափ հեռու է , բայց հիմա ա՛լ
սակի մեծ հեռաւորութեան մը մէջ կը տես-
նէի զայն :

Այս պարագան ալ չկրցաւ զիս յուսահա-
տեցնել . միտքս դրած էի տեսնել այդ խն-
թը , եւ անպատճառ պիտի տեսնէի :

Քիչ ետքը ուրիշ զփութարութիւն մըն ալ
բայանուեցաւ : Ջուրը երթալով կը խորունկ-
ար : Ծունկերս անցած էր արդէն , եւ մին-
չեւ մէջքիս կը հասնէր : Միւս կողմէ , եղէգ-
ներն ալ կը նեղէին զիս . չաա զփութարաւ մի-
տն կը լաջողէի անցք մը բանալ անոնց մէ-
ջէն : Ներքէս ձայն մը կը յանձնարարէր ինծի
որ նա դառնամ :

Կտոր մը տեղ ալ յառաջացայ այդպէս ,
Ջուրը վերջ ի վերջոյ մէջքս ալ անցած էր .
բայնի էր որ մօլորած էի չիտակ ճամբէն ,
խառնելով այն լոյսի ցոլքէն՝ որ ճահիճին
կայ երկարած էր , եւ որ շարունակ կը հե-
ռանար իզմէ :

Պահ մը կանգ առի , կայութիւնը ճշդե-
րու համար : Չորս կողմս խիտ մութ մը տա-
րածուած էր եւ ոչ մէկ ձայն կը խռովէր գի-
ւերուան լռութիւնը : Հակառակ ջուրին մէջ
մթնոլորտը ըլլալուն , կը զգայի որ կը քրտնիմ :

... Յանկարծ , անսրոշ աղմուկ մը զիս
ուշիքի բերաւ : Ինծի անառնի եկաւ թէ խոշոր
եռակ մը ածապարանքով իրեն ճամբայ մը կը
բանայ եղէգներուն մէջէն : Ահաւի սարսափ
մը զրկեց զիս : Դէպի ձախս նետուեցայ ու
տեսնելով որ ճահիճը չա՛տ խոր է այդ կողմը ,
պայտ լողալ յուսահատական կատաղու-
թեամբ մը :

Ազմուկը ինծի կը հետեւէր միշտ : Մահը
այնչա՛փ մօտաւորաւ կը զգայի որ հազիւ քանի
մը գրկաչափ տեղ յառաջացած , կեցայ ու
եւտիս դարձայ :

Ան ասեւ տեսայ որ մարդ մը՝ ինծի չափ
կտաղի թափով մը դէպի խմկողմս կը յառա-
ջանար լողալով :

Մարդը՝ ակռաներուն մէջ խոշոր դանակ
մը առած էր , ինչ որ ա՛լ աւելի մեծցուց
սարսափս :

Տարակոյս չկար : Վերջին ժամս հնչած
էր : Ուղեցի լողալ՝ բայց չյաջողեցայ : Ակն-
թարթ մը ետքը բոլորովին կորսնցուցի ինք-
զինքս , զգալով որ ջուրին տակը կ'երթամ :

(Շարունակելի)

ՅՈՒՇԱՏԵՏԵՐ

Ս. Պատրիարք Հայրը չաբաթ օրը Պատրի-
արքարանի մէջ ընթացիկ գործերով զբաղելէ
ետքը , իրիկունը Պէոյիւքտէրէ գնաց ուր
մնաց մինչեւ երեքշաբթի , կազմուրուելու
եւ հանգիստ առնելու . կիրակի առաւօտ քա-
րողեց գիւղին եկեղեցին , Ն. Սրբազնութիւնը
որ հիւրընկալուած էր էստեան Տեարց բնա-
կարանը , այցելեց նաեւ Մանուկ էֆ. Սըմ-
բատեանի ու որդւոյն , եւ օրհնակիր շնորհա-
կալութիւն յայտնեց այն ինքնաբեր բարե-
գործութեան համար որով 1000 տկի նուր-
իւցին Մայր Եկեղեցիին նորոգութեանը :

Կայս. գնահատում . — Գոհութեամբ կը
ծանուցանենք թէ Դ. Կարգի Մէծիտիյէ պատ-
ուանչան շնորհուած է Սէնայի վարժարանին
չափազերտութեան ուսուցիչ Երուանդ էֆ. Չա-
վուչեանի :

Պարսից Շահը այս անգամ Եւրոպա ուղի-
ւորած միջոցին Վենետիկէ անցած ըլլալով ,
Միխիլարեանց Արքանայր Կիրեղեան արքե-
պիսկ . բարի գալուստի այցելութիւն տուած
եւ սիրակիր ընդունելութիւն գտած էր Պար-
սիկ Վհնապետին կողմէ որ նոյն իսկ խոստա-
ցած էր Ս. Ղազար այցելել՝ բայց օգին խըս-
տութեան պատճառով չէր կրցած : Մուզաֆ-
ֆէրէտտին Շահը՝ մեծապէս զոհ մնալով իրեն

եղած մեծարանքներէն՝ օգոստ. 16/ին Բարիզ գտնուած միջոցին հրամայած է որ «Ասիւժ եւ Արեւ» պատուանշանի Ա աստիճանը նուիրուի Կիւրեղեան Աբբաճօր :

Ս. Պատրիարք Հայրը չորեքշաբթի օրը Կայս. Պալատ գնաց :

Քաղ. Ժողովը իր չորեքշաբթի օրուան նիստին մէջ նկատողութեան առաւ Միքայել էֆ. Յակոբեանի կողմէ Ս. Պատրիարքին յանձնուած հաշիւներն ու տոմարները՝ ի մասին Հիւանդանոցի վերաշինութեան գործին, որոնցմէ վերահասու եղաւ թէ այդ վերաշինութեան համար 26.000 ոսկի ծախք գացեր է, որուն 20,000 ոսկին հանգանակութեամբ հաւաքուած ըլլալը գոհութեամբ տեսնուեցաւ : Ժողովը բանաւոր դատեց Յակոբեան էֆ. ի առաջարկը, — հանգանակութեան մասնակցող անձանց անունները մարմարեայ քարի մը վրայ արձանագրել, — եւ ընդունելով զայն, միանգամայն որոշեց որ ուրիշ մարմարեայ քարի մը վրայ ալ արձանագրութիւն նախկին բարերարներու՝ Պէզճեան Յարութիւն Ամիրայի, Տատեանց, Պալեանց եւ ուրիշ բարերարներու անունները : Վերաշինութենէն աւելցած կայ 500 ոսկի, որ պիտի յատկացուի Հիւանդանոցին մէջ պէտք տեսնուած որ եւ է շինութեան մը : Ժողովը որոշեց նաեւ որ ներկայացուած հաշիւներն ու տոմարները Տնտեսական Խորհուրդին յղուին ի նախաքննութիւն :

Բարիզի մէջ, Պ. Աղեքսանդր Մանթաշեանի ծախքով կառուցանելի հայ եկեղեցիին շինութիւնը կը յապաղի, որովհետեւ հոգը փտած եւ փորուած մասերուն մէջէն ջուր ելած ըլլալով, երկու շարժական մեքենաներու միջոցաւ դաժ, աւաղ եւ կիր կը լեցունին այդ մասերուն մէջ՝ հաստատուն կերպով զետեղելու համար հիմերը : այս պատճառով, 40,000 Ֆրանքի բացառիկ ծախք մը կերթայ Պ. Մանթաշեան 400,000 Ֆրանք վճարած է հողին համար եւ 600,000 Ֆր. ալ պիտի ծախսուի շինութեան գործին, — համագումար մէկ միլիոն ֆր. : Այդ գետինը կը զբաղուի Բարիզի առաջնակարգ թաղերէն մէկուն՝ Ժան-Կուստի փողոցին մէջ, որ Շան դ'Էլիզէի հրապարակը կեղծ : Եւրոպայի Հայոց առաջ-

նորդ Տ. Գէորգ եպիսկ. Իւթիւճեան իմանալով որ խորանին ներքեւ դռնապանի բնակութեան յատուկ խուցեր պիտի շինուին, ընդգրկուած էր եւ իր դիտողութեան վրայ շինութեան ծրագրին այս մասը ջնջուր է :

Ասանայի կուսակալ Պահրի փաշա փոխադարձ այցելութեան երթալով՝ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան պատուիրակ Տ. Մովսէս եպիսկ Կէօմրիւքճեանի, խոստացած է ամէն զիւրութիւն ընծայել ընտրական գործողութեանց համար :

Կարապետ վրդ. Մազլիսեան անցեալ կիրակի կատարեր է օծումը Նիկոմիդիոյ թեմ. ինչն Գարաշուի Արամ գիւղի եկեղեցիին որ նոր կառուցուած էր՝ Օրտուէն հոն գաղթող աղգայիններու կողմէ :

Պաղտատի առաջն. տեղապահ Տ. Գաբրիէլ վրդ. Անոյշեան Դամասկոս պաշտօնավարած միջոցին շինութեանց համար ըրած 2000 ոսկիէ աւելի ծախքին հաշիւը երուսաղեմի Ս. Պատրիարք Հօր զրկած ըլլալով, Ն. Սրբաշնութիւնը կարգ մը բացատրութիւններ պահանջեր է այդ ծախքերուն վերաբերմամբ : Լաւագոյն գործ մը կատարած պիտի ըլլար Անոյշեան վարդապետ այդ բացատրութիւնները փութացնելով՝ քան թէ հետեւ հետեւ անձա՛ն միջամտութիւն մը փորձելով երուսաղեմի մատակարարական գործին մէջ, եւ այն ալ ծուռ ճամբով մը :

Ադր. Պալտայ Փրանսական հիւպատոսարանին թարգման նշանակուեր է քաղքին ծանօթ աղգայիններէն Մաքսուտ էֆ. Սանտալճեան :

Պէտրո Տ. Մանուկեան անուն հայ ուսանող մը փալուն քննութիւն մը տալով Թուրինոյի մէջ, Արուեստապետ Եկեղեցական ճարտարագործութեանց տիտղոսը առերէն : Յիշեալ երիտասարդը Վենետիկի Մարտա-Ռափայէլեան վարժարանի չրջանը աւարտելէ յետոյ, արուեստագիտական վարժարանէն վկայուած էր իբր վարժ մեքենագործ :

Արժանատի Կ. Ս. Իիթիլճեան

Տպագրութիւն Գ. Մ. Ս. Ե. Ռ. Ս. Ս.

Կ. Պոլս. Ֆինանսերը եօզուշու. Թիւ 27

Գրասուն ԵՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ

ԳՊԼԻՍ, 60 Էսկի-Չասքիե Ճասսեսի, 60

Հասարակուեցաւ

ՀՐԱՆՏ Ս. ԽԱՆՃԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

190 էջ, 16աճալ, գին 5 դր.

Ջարդարուած բազմաթիւ լուսատիպ պատկերներով: Անհրաժեշտ ամէն զպրոցականի եւ անասականի:

Նոյն հեղինակից՝

ՊԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, ՄԻՋԻՆ ԴԱՍԵՆԹԱՅԷ

240 էջ, պտկրգդ. գին 5 դր.

Եւրոպական ամենէն համբաւաւոր եւ նուազագոյն գործերու հեռեւեղութեամբ:

Սոյն երկու գործերու իւրաքանչիւրէն յետոյի ուսուցիչներու նմոյշ կը զրկուի 50 կրպիկ զրոյմաթուղթի փոխարէն:

ԱՏՍՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 200

Կալաթա-Աերայի Լիսէին դէմ

Է. Ե. Շր. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Է. Դ. Ուր. օրերը 6 ԿԵ մինչեւ 11 1/2

Կրակի օրերը ժամադրութեամբ

ԱՌԵԻՏԻՄԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԲԱՆԿԱԼԹԻ

Ե. ՏԱՐԵՇԲԱՆ

ԳԻՇԵՐՈՒԿ ՏԱՐԵԿԱՆ 18 ԼԻՐԱ ՕՍՄԱՆԵԱՆ

Առեւտր. վարժարանի հինգերորդ տարեւորջանը սկսաւ: Սոյն վարժարանի նպատակն է լուրջ դաստիարակութեամբ, գործնական գիտելիքներով ուսուցանել ԼԵՁՈՒ եւ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

Վարժարանը ունի Մանկապարտէզի, Նախակրթարանի եւ Ուսումնարանի երեք դասընթացները:

Նախակրթարանի աշակերտաց ալ թոյլատրուած է Գերմ. եւ Անգլ. լեզուներն եւս ուսանիլ, Հայ, Օսմ. եւ Ֆրանս. լեզուաց մէջ հարկ եղած յաջողակութիւնը պահպանելով միշտ:

Նկատի առնելով հեռաքանակ ծնողաց նիւթական վիճակը, արժան դատեցինք միայն 18 լիրա տարեթոշակով գիշերօթիկ աշակերտ ընդունիլ վարժարանիս մէջ, Մոտղք ալ պարտին նկատի առնուլ թէ օտար լեզու սովորելու համար օճալ վարժարան յաճախելու ըմբռնումը սխալ է եւ փնասակար: Առեւտր. վարժարանի մէջ 11-12 տարեկան պատանիներ հինգ լեզու կը սովորին՝ գրելով, խօսելով միասին:

Աշակերտաց արձանագրութեան համար զիմել, ամէն օր, Առեւտր. վարժարան, Բանկալթի, Ճէտիտիէ փողոց:

Հիմնադիր-Տնօրէն

ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԵՄՔ

Բնիկութեան զրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,667,667 ֆրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիչներ ու տոկոս	54,000,000 »
Երաշխաւորութեան գումար	122 000 000 »
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000 »

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ Բաշափին վրայ, Մախաւան հին տեղը
Ընդհ. Գրեթակայ
Ա. ՀԻԻՐՄԻԻԶ
ԹԷՈՏՈՐ ՌԷԲԵԼ

Արդեն հրահարակուած է

1903 ՏԱՐԻՈՅ

Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Բ Ը

(AGENDA INTERNATIONAL)

(H. MATTEOSIAN)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Նախորդ տարիներէն աւելի ճոխ և աւելի խնամով պատրաստուած

Պարզ լաքակալմ 3 ղրշ.

Ընթիւ լաքակալմ 5 »

ՈՍԿԵԶՈՄ ՓԱՌԱԿԱԶՄԸ 9 »

20 օրինակէն աւելի
գնողներուն զոհացուցիչ
գեղջ :

Կը խնդրուի գաւառի պատուարժան յանախորդներէն որ հաճին իրենց
յանձնարարութիւնները կանուխէն ընել՝ Յուշատետրերը ժամանակին ձեռներկին
ունենալու համար : Իիմել Հրահարակցին ,

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, ՊԱՅՊԼ ՀԱՌԻՉ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԻՒՆԻՍ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻՒՂ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ շէտք 240,000,000 ֆր.

1899ին գանձուած ապահովագրին 19,500,000 »

Դրամագլուխ եւ պահեստ 105,000,000 »

Ապահովագրեալ գրամագլուխ 18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ԶԻՒՂ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ շէտք 99,000,000 ֆր.

Ընթացիկ ապահովագրութիւնք 253,000,000 »

Դրամագլուխ եւ պահեստ 150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատուի 60% — ինչ որ
«Ինքիօն»ի ապահովագրելոց կ'ընծայի հսկայ երաշխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ**
ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԳՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով : Նպատաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան
պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում , որով իւնիօնի
ապահովագրութեան ԶԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբուրքիւններէն, որոնց կ'են-
թարկուին միշտ այն անձինք , որ շահաբաժիններու բաղման (accumulation des
bénéfices) ՅՈՒՐԻ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովա-
դուին :

Ընկերութեան գրամատուան է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ԳԱՆՔԱՆ
Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս , Կալարա , Թահեսպուրուն խան , Օսմ. Պալատին գիմացը

Գործակալութիւնք Թուրքիա գլխաւոր քաղաքաց մէջ